ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

05-ը հոկտեմբերի 2023թ.

Աբովյան համայնքի ղեկավար Էդուարդ Բաբայանի շնորհավորական ուղերձը Ուսուցչի օրվա կապակցությամբ

Սիրելի՛ մանկավարժներ.

Ջերմորեն և լավագույն ցանկություններով շնորհավորում եմ բոլորիդ հուկտեմբերի 5-ի՝ Ուսուցչի օրվա կապակցությամբ: Մանկավարժությունը առաքելություն է, որը դուք իրականացնում եք մեծագույն նվիրումով, համբերատար ու պատասխանատու մոտեցմամբ: Անգնահատելի և անփոխարինելի է ձեր տեղն ու դերը քաղաքակիրթ և հանդուրժող հասարակության կայացման գործում:

Վերջին օրերի ցավալի անցուդարձերով պայմանավորված այսօր Հայաստանում են նաև Արցախից բռնի տեղահանված մանկավարժներն ու աշակերտները, որոնց վստահ եմ՝ մեր ուսհաստատություններում կընդունենք առանձնակի ջերմությամբ ու հոգատարությամբ: Համատեղ ուժերով, փորձի փոխանակմամբ և հարուստ գիտելիքներով դուք դեռ պետք է կրթեք և դաստիարկեք հայրենասեր, մրցունակ ու բանիմաց սերունդներ:

Առանձնահատուկ շնորհավորում եմ Աբովյան համայնքի դպրոցների, համայնքային ենթակայության նախադպրոցական կրթական, մարզակրթական և կրթամշակութային հաստատությունների աշխատակիցներին: Նկատելի և գովելի է համայնքում ձեր կատարած կրթադաստիարակչական շնորհակալ աշխատանքը:

Սիրելի՛ ուսուցիչներ, դաստիարակներ, կրթական ոլորտի հարգելի՛ ներկայացուցիչներ.

Մասնագիտական օրվա առիթով մաղթում եմ առաջընթաց ու վերելքներ ձեր ընտրած բարդ ու պատվաբեր ոլորտում, անսպառ եռանդ, ստեղծագործ միտք և համբերություն ուսուցման պատասխանատու գործընթացում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ